կաց, ձեռամբ Յովհաննէս Քահանային և ծաղկեցաւ ի քաղաքս Խիզան, ձեռամբ Խաչատուր տէր Քահանային. չնորհիւ Տեառն սկսաք և ողորմութեամբ Նորին կատարեցաք ի մեծ Թուականիս Հայոց ՌԾԴ (1605) ի Հայրապետութեան Էջմիածնայ Տեառն Տէր Գրիգորիսի Ուրֆայեցւոյ և ի մերոյս Աղթամարայ Տեառն Տէր Գրիգորիսի, Թագաւորութեան այլազգեայ Սուլթան Մահմատ Խոնդքարին . . . ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անօրինաց և ի սղութենէ հացի, զի լիտր խոնդքարին ալիւրն եղեւ Ժ. չահի և չամիչն՝ ԺԲ. և բրինձն Լ. չահի. չափ ցորեան ԺՔ չահի, և կորեկն ԺԴ չահի. վայ ինձ որ ի Սեւաստու երկիրն չատք տղայք կերան։ Եւ ի մեր երկիրս և ի ծովուս բոլորն Ժ. օր խոտով և բանջարով անցուցանէին և բազումք սովամահ եղան, և սաստկացեալ է պատուհասն ի վերայ ամենայն երկրիս մեր։ Զի երեկ (եկն) կարմիր գլուխն[1]) բազում զաւրաւք և էառ գԹաւրէզ, և գՋուղա, գնախջըվան, գերեւան, և զամենայն Թեմս նոցա և նստաւ յԷրեւան տարի մի։

Մինչեւ եկեալ ի Սատմբոլա ոմն Սարդար Ջղալ անուն անթիւ զաւրաւք և արար վախստական զազգն Պարսից։ Եւ գուռզ Պարսիկքն արարին մեծ վնաս, զի զամենայն ազգս հայոց, որ էին յԵրեւան, մինչ ի Թաւրէզ և զամենեսեան գերի տարան զայր և զկին, ծերս և զտղայս։ Եւ այնչափ քանդեաց և աւերեաց, որ զչուն և զկատուն այլ սատակեցոյց և զմարդն աւարեաց ի Խուժաստան աշխարհն իւրեանց և եղեն այն ամենայն Քրիստոնեայքն ցիր և ցան մինչեւ ի Քաշան և յԱսպահան։ Եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց, բայց գոհանամք զԱստուծոյ՝ որ ի վիճակին Քրիստոսի եմք։

Եւ ինքն կարմիր գլուխն նստաւ ձմեռն ի Թաւրէզ և զաւրքն Թուրքաց զարձաւ բազում նեղութեամբ ի Վան։ Եւ ի սոյն զարնան զարձեալ եկն կարմիր գլուխն ի վերայ Վանայ մեծաւ քաջութեամբ, մինչ որ արար վախստական գՋղալն ի յԸրզրում և քուրդ Միրշաֆն և ամենայն ամիրայքն գնացին փախստեամբ

---

[1]) Կ. գզել պաչ Պարսիկ, Շիա կրօնիւ։